# ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ-ԻՑ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Ադրբեջանական ՍՍՀ-ից փախստականներին օգնություն ցույց տալու հարցերի քննարկման նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը ստեղծել է հանձնաժողով, որի կազմի մեջ մտել են հանրապետության համապատասխան մինիստրությունների ու գերատեսչությունների ղեկավարներ, հասարակայնության և մտավորականության ներկայացուցիչներ: Հանձնաժողովի նախագահ է հաստատվել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Վ. Մովսիսյանը:

«Հայբնակսոցբանկի» Երևանի քաղաքային վարչությունում բացվել է հանձնաժողովի ընթացիկ հաշիվ՝ 700810 համարով, որտեղ կմուծվեն աշխատավորական կոլեկտիվների և առանձին քաղաքացիների ավանդները փախստականների օգնության ֆոնդին:

Հիշյալ հաշվով արդեն ստացվում են առաջին դրամական միջոցները:

Փախստականներին միանվագ օգնություն ցույց տալու համար հանրապետության կառավարությունը հանձնաժողովին հատկացրել է 1,7 միլիոն ռուբլի:

Հանձնաժողովին թույլատրված է իր հայեցողությամբ սահմանել դրամական միջոցների ծախսման և փախստականներին օգնություն ցույց տալու կարգը:

Հանձնարարված է հանձնաժողովի քարտուղարությանը՝ իր գործունեությունը սկսել ս. թ. նոյեմբերի 22-ից «Հայպետագրոարդի» շենքում հատկացված սենյակում:

Նոյեմբերի 18-ին տեղի է ունեցել հանձնաժողովի առաջին նիստը: Քննարկվել են կազմակերպական և այլ հարցեր՝ կապված հանձնաժողովի աշխատանքի կոնկրետ ուղղությունների հետ:

(Արմենպրես)